բռնուիլը՝ քիթի ու ականջներու կտրուիլն և կամ սպանուիլը յիշուած է. ինչպէս քանիցս անգամ Դարեհէն պարծանքով յիշուած են Մաքացի Քէմաթաինը և ուրիշներուն։ Եթէ Հայերու վրայ տարած յաղթութիւններն ճշմարիտ ըլլային՝ տարօրինակ բան մի պիտի ըլլար որ այնչափ պատերազմներէ ետքը անոնց թագաւորն կամ ապստամբապետը չբռնուէր կամ գէթ սպանուիլը չյիշուէր։

Հինգերորդ. Նկատողութեան արժանի է որ Բաբիլոնի Տէհվաեանա գաւառէն Հայ մի վեր կելլէ Բաբիլաստանը կապստամբեցնէ՝ Բաբիլոն քաղաքը կառնէ և Բաբիլոնին թագաւոր կըլլայ՝ և ետքէն Դարեհէն յաղթուելով կրռնուի ու կսպանուի։

Այս յօդուածը բացատրելու համար պէտք է—կամ կարծել որ Բաբիլոնի այս գաւառը Հայերու իշխանութեան տակն էր՝ և անոր պետը կամ կուսակալը Հայաստանի թագաւորէն դրդուելով և զօրքով ու ստակով օգնուելով կյաջողի Բաբիլաստանը Դարեհէն ապստամբեցնել՝ մայրաքաղաքն առնել և թագաւոր դառնալ. և կամ Էրգհան Հայերու թագաւորէն խրկուած զօրապետ մի էր որ Տէհվաեանա գաւառին տիրելով և անակնկալ յաջողութիւններ ունենալով յաջողեր էր Բաբիլաստանի միւս գաւառներն ալ ոտքի հանել ու Բաբիլոն քաղաքն առնել։ Բայց եթէ այս երկու կարծիքներն անհաւանական երևին և պնդուի որ Հայերն իրենք արդէն նուաճուած ու Դարեհին հպատակ էին. այն ատեն պիտի հարցուի մի՞թէ հաւանական է որ սոսկ հայ մի օտար երկրի մի մէջ միայն «ես այն ինչն եմ» ըսելով յաջողի ամբողջ երկիրն ապստամբեցնել իւր թագաւորին դէմ՝ այն երկրին տիրել և ինքզինքը թագաւոր հրատարակել։ Այսպիսի բան մի հաւանական կարծելն ըստ ինձ անհեթեթութեան ծայրն կըլլայ։

Որ ինչ այս արձանագրութիւններէ կրնանք հետևցնել այն է—որ Հայաստան Դարեհի ատենն ընդարձակ երկիր մի և Հայերն ալ մեծ զօրաւոր ու անկախ ազգ մի պիտի եղած ըլլան՝ և պատմագրական ուրիշ ամեն պարագաներն աղէկ կշռելով եզրակացնել՝ որ Քսենոփոնի մեր Երուանդի ու Տիգրանի վրայ ըրած պատմութիւնը բոլորովին անստոյգ և կամ ուրիշ բան չէ՝ եթէ ոչ զուարճական վէպ մի ինչպէս ալ արդի պատմագէտներն կհակին նկատել անոր Կիւրոսի Խրատ ամբողջ գիրքը։

Ն. ԳՕՐՕՑԵԱՆ։

ԻՄ ՍԻՐ։

Այրպիսիներին է Աստուծու արքայութիւնը (Ղուկ. ԺԸ. 16)։

Կսիրեմ հանգչել սրտով և հոգով
Փոքր մանուկների ընկերութեան մէջ՝
Կսիրեմ ես միշտ նայել վայելել
Նոցա կենդանի և ուրախ խաղեր։
Կսիրեմ նոցա անմեղունչ խօսքին՝
Իբրև սոխակի երգին՝ ականջ դնել՝

Եւ անմեղ հոգու գեղեցկութիւնը
Ցեսնել շարժմունքի եւ հայեացքի մէջ։
Նոցա շարժմունքըն են ազատ, կայտառ։
Նոցա աչքերըն են պարզ և պայծառ։
Նոցա զգացմունք և խօսքն են արդար։
Եւ նոցա երես զուարթ իբր գարուն...
Կեղծաւորութեան, նենգ ատելութեան
Խաւար պատում չէ նոցա միտք, շրթունք։
Եւ երախտագէտ սէրով են լցված
Մանկական սրտի անկեղծ զգացմունք։
Ի՞նչ յաղթանակով նոքա կնայեն
Իւրեանց ծնողներին, բարեկամներին։
Այսպէս հրեշտակներ ուրախ և քաղցր են
Աստուած գովելիս, փառաբանելիս։—
Ով ներկայ զարիս, դուք, իմաստուններ,
Մտաբերեցէք Փրկչի մեծ խօսքեր։
«Դարձէք և եղէք իբրև մանուկներ»—
Ընթայութիւն ձեզ կբանայ դռներ....։

ԻՆՆԱՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ։

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ (ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ) ԵԿԵՂԵՑԻ ՌՈՒՍԻԱՅԻ ՄԷՋ։

Հ՝ Մ՝	Ինչանի գաւառում եղած գիւղերը Գառնու բարձրաբերձ-ընդան մէջ։ Նոցա եկեղեցիների անունները, ընդ-, կալուածները, պրամագլուխ, պարբեկան մոդ և ծախս։		Դրամագլուխ.		Գիւղի գանձարանի գումարը դրամագլուխ դէ-գանձում։		Ծախս.	
			Ռ.	Կ.	Ռ.	Կ.	Ռ.	Կ.
1	Դարղալու եկեղեցի	Ս. Աստուածածնի	188	7	25	,,	24	50
2	Իւվա —	Ս. Աստուածածնի	268	58	35	44	16	80
3	Վ. Ղամարլու —	Ս. Սարգսի . .	,,	,,	40	30	40	30
4	Ն. Ղամարլու —	Ս. Աստուածածնի	40	85	47	18	47	40
5	Այասլու —	Ս. Աստուածածնի	42	30	28	38	21	92
6	Բեկջաղլու —	Ս. Սարգսի . .	224	3	34	23	,,	,,
7	Արտաշար —	Ս. Աստուածածնի	1	4	36	54	24	55
8	Դուին —	Ս. Յակոբի . .	9	60	20	32	19	,,
9	Դուին Ք. քենդի—	Ս. Աստուածածնի	,,	,,	9	20	89	20
10	Դաւալու —	Ս. Յակոբի . .	38	93	61	72	49	30
11	Դալուլար —	Ս. Աստուածածնի	31	60	19	48	14	,,
12	Աղջաղշլաղ —	Ս. Աստուածածնի	73	8	34	27	15	28
13	Զօհրաբլու —	Ս. Աստուածածնի	65	6	10	44	5	40